«Արդշինբանկ» ՓԲԸ Խորհուրդը 2019 թվականի օգոստոսի 5-ի թիվ 08/19-01 Լ որոշմամբ որոշել է՝

1. Վճարել միջանկյալ շահութաբաժիններ «Արդշինբանկ» ՓԲԸ «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի համար, հաշվարկված համաձայն «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության 9^{1}.3. կետի 1-ին ենթակետի:

2. Միջանկյալ շահութաբաժինները վճարել Բանկի «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսեր ունեցող «Արդշինբանկ» ՓԲԸ այն բաժնետերերին, ովքեր ընդգրկվել են «Արդշինբանկ» ՓԲԸ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի ռեեստրում 2019 թվականի օգոստոսի 5-ի դրությամբ՝ ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում նրանց մասնակցության համամասնության:

3. Միջանկյալ շահութաբաժինների վճարումն իրականացնել սեպտեմբերի 6-ին համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: